նախագիծ

“Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն” հիմնադրամի Ռազմավարական ծրագիր 2010-2015

Անցումային Ժամանակաշրջան

5/6/2010

Ռազմավարական ծրագիրը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տեսլականն է: Այն միտված է մասնագիտական կրթության ոլորտում որակի մշակույթի ձևավորմանը:

Հապավումներ

ՈԱԱԿ	*«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»*
ԵՄԿՏ	*Եվրոպական բարձրագույն կրթության տարածք*
ՈԱԵՑ	*Որակի ապահովման եվրոպական ընկերակցություն*
ԵՍՈՒ	*Որակի ապահովման եվրոպական ստանդարտներ և ուղենիշեր*
ԿԳՆ	*ՀՀ կրթության և գիտության նախարարություն*
ՄԿ	*Մասնագիտական կրթություն*
ՄՈՒՀ	*Մասնագիտական ուսումնական հաստատություն*

ՆԱԽԱԲԱՆ

Այս ռազմավարական ծրագիրը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տեսլականն է: Այն միտված է ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում որակի մշակույթի ձևավորմանը, ինչը կնպաստի ոլորտի հետագա տրանսֆորմացիային՝դարձնելով այն դինամիկ, արդյունավետ և մրցունակ՝ կարևորագույն գործոն գիտելիքահեն տնտեսություն ստեղծելու համար:

Ծրագիրը ստեղծվել է ՈԱԱԿ կառավարման խորհրդի նախաձեռնությամբ՝ շահակիցների գործուն մասնակցությամբ և օժանդակությամբ: Այն քննարկվել և հավանության է արժանացել:

Մենք վստահ ենք, որ մեծ թվով շահակիցների ներգրավումը մեծապես կաջակցի ծրագրի իրականացմանը: ՀՀ կառավարության անունից կցանկանայի շնորհակալություն հայտնել շահագրգիռ բոլոր կողմերին՝ ՈԱԱԿ առաջին ռազմավարական ծրագրի աջակցման համար: Կցանկանայի նաև շնորհակալական խոսքեր ուղղել ՈԱԱԿ աշխատակիցներին և բոլոր նրանց, ովքեր մասնակցել են ծրագրի պատրաստմանը:

Ցանկանում եմ դիմել մեր Կառավարությանը, շահակիցներին, դոնոր կազմակերպություններին և բոլոր անհատներին՝ գործնական աջակցություն ցուցաբերել ծրագրում նախանշված նպատակների իրականացմանը:

ՈԱԱԿ Կառավարման խորհրդի նախագահ

ՀՀ վարչապետ Տ.Սարգսյան

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **5**

Մասնագիտական կրթությունը Հայաստանում 5

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ **9**

Համընդհանուր միտումներ 9

Քաղաքական մարտահրավերներ 10

Տնտեսական մարտահրավերներ 11

Իրավական մարտահրավերներ 12

Սոցիալական մարտահրավերներ 14

Տեխնոլոգիական մարտահրավերներ 15

ՈԱԱԿ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ **16**

ՈԱԱԿ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ **17**

ՈԱԱԿ-ի որակի ապահովման ուղենիշ-սկզբունքները 19

Իրականացման ռազմավարությունը 21

Անցումային շրջանի միջոցառումներ 27

ՈԱԱԿ-Ի ԵՌԱՄՅԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՐՃ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ .. **29**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթությունը Հայաստանում

Առկա վիճակ

ՀՀ մասնագիտական կրթությունը և համակարգը կազմող ուսումնական հաստատությունները երկու տասնամյակ տևող տնտեսական դժվարություններից և որակի շարունակական անկման ժամանակաշրջանից հետո գտնվում են մի հանգրվանում, երբ համակարգը միջազգային զարգացումներին համահունչ վերակազմավորելու և այն Եվրոպական բարձրագույն կրթության տարածք ինտեգրելու կարիքն ունի: Պետության կողմից ձեռնարկվող քայլերը պատեհ հնարավորություն են ստեղծում անդրադառնալու ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող քաղաքականությանը և գործնական քայլերի նոր ուղղություններին:

Հայաստանի մասնագիտական կրթությունը վերջին քսան տարվա ընթացքում զգալի փոփոխությունների է ենթարկվել: Մեծ թվով օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի ընդունումը փոխել է կրթական համակարգի վարչարարությունը: Էական փոփոխությունները դեռևս ընթացքում են: Կարելի է պնդել, որ համակարգում տեղի են ունենում լայնածավալ փոփոխություններ: Սակայն շատ դեպքերում փոփոխությունները էապես չեն բարելավել իրավիճակը, պատշաճ կերպով համակարգված և ամրապնդված չեն նոր գործելակերպով և մտածելակերպով: Նոր մարտահրավերները դիմագրավելիս՝ հին գործելակերպով և մտածելակերպով առաջնորդվելը ոչ միայն խոչընդոտում է առաջընթացը, այլ նաև որոշակի հոգեբանական ընդվզում է առաջացնում կատարվող փոփոխությունների նկատմամբ: Վերափոխումների ոչ բավարար կերպով համակարգված և պլանավորված ընթացքը, ձեռնարկված քայլերի իրականանալիության և շարունակականության բացակայությունը անհամաչափություն են առաջացնում ՄԿ համակարգում՝ ի հայտ բերելով բարեփոխումների և որակի ապահովման խնդիրների նկատմամբ տարբեր՝ հիմնականում թույլ փոխկապակցված մոտեցումներ, որոնք, մի շարք բացասական ազդեցությունների հետ մեկտեղ խոչընդոտում են նաև ուսանողների շարժունությունն ու կրեդիտների փոխճանաչումը:

ԿԳՆ տվյալների համաձայն (www.edu.am) ՀՀ մասնագիտական կրթությունը ներկայումս ընդգրկում է

- 18 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ և 13 մասնաճյուղեր
- 3 պետական մասնակցությամբ բարձրագույն ուսումնական հաստատություններ
- 48 ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնց թվում 37-ը հավատարմագրված են

- 3 արտերկրի պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղեր
- 5 արտերկրի ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնաճյուղեր
- 83 միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատություններ
- 34 նախնական մասնագիտական պետական ուսումնական հաստատություններ
- 12 միջին մասնագիտական հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններ
- 11 միջին մասնագիտական ոչ պետական լիցենզավորված ուսումնական հաստատություններ:

2009 թվականին ԿԳՆ-ի ստուգումների արդյունքում փակվել են 9-ը ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, իսկ 2010 թվականին ևս 7-ը և 7 մասնագիտության կրթական ծրագրեր՝ լիցենզավորման պայմաններին չհամապատասխանելու պատճառով:

Կախված ուսումնական հաստատության տարածքային տեղաբաշխումից և ռազմավարական նշանակությունից, ոլորտում առկա ուսումնական հաստատությունների բազմազանությունը և միմյանցից տարանջատումը առաջացրել է բարեփոխումների իրականացման տարբեր մոտեցումներ՝ առաջացնելով համակարգի մասնատվածություն և բարեփոխումների անհամահունչ ընթացք:

ՀՀ մասնագիտական կրթությունը ընդհանուր առմամբ բնութագրվում է.

- որպես մշակութային արժեք, որը բարձրացնում է մասնագիտական կրթության պահանջարկը,
- մոտավորապես 3 միլիոն բնակչություն ունեցող պետության համար ՄՈՒՀ-երի չափազանց մեծ քանակով,
- պետական ՄՈՒՀ-երում կրթության բոլոր աստիճաններում բարձր թվակազմով ընդունելությամբ, ինչը հաճախ գերազանցում է ՄՈՒՀ-երի հնարավորությունների սահմանները,
- կրթության և գիտության նախարարի հաճախակի փոփոխությամբ,
- մասնագիտական կրթության հնացած կրթական չափորոշիչներով և չափանիշներով
- դասավանդման և ուսումնառության ոչ ճկուն մեթոդներով,
- ծերացող դասախոսական կազմով, երիտասարդ դասախոսներին գրավելու ոչ բավարար ջանքերով և «ուղեղների արտահոսքով»
- ինստիտուցիոնալ կառավարման և պլանավորման խնդիրներով,
- միջազգային միտումների ոչ համարժեք մեկնաբանությամբ,
- գիտության և աշխատաշուկայի միջև թույլ կապերով,

- հիմնական շահակիցների բարձր ակնկալիքներով և պահանջներով, որոնք, սակայն, չեն ուղեկցվում համարժեք ռեսուրսային աջակցությամբ,
- ոչ բավարար համատեքստային ենթակառուցվածքներով, հատկապես տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) առումով,
- տնտեսության մասնավոր հատվածի կողմից թույլ աջակցությամբ և ՄՈՒՀ-երում ներդրումների մշակույթի բացակայությամբ,
- պետական ոչ բավարար ֆինանսական և նյութատեխնիկական աջակցությամբ:

Համակարգի արագընթաց վերափոխման պայմաններում ռազմավարական հստակ մոտեցման բացակայությունը էլ ավելի է մեծացրել Հայաստանի և զարգացած երկրների մասնագիտական կրթության միջև ճեղքվածքը: Գիտելիքահեն տնտեսության զարգացման գործում ՄԿ դերակատարության շեշտադրումն անխուսափելի է դարձնում հետևյալ հստակ փոփոխությունների անհրաժեշտությունը.

- վերանայել բարձրագույն կրթության դերը, շեշտադրելով 3 հիմնական ուղղությունները՝ ուսուցում և ուսումնառություն, հետազոտություն և ծառայություն հասարակությանը
- ընդունել համակարգի տրասֆորմացիան որպես գիտելիքահեն տնտեսության ստեղծման նպատակ
- ընդունել «որակը որպես համապատասխանությունը նպատակներին» սահմանումը, ընդ որում նպատակները պետք է միտված լինեն որակի շարունակական բարելավմանը և նպաստեն մասնագիտական կրթության համակարգի բովանդակային, կառուցվածքային, ինչպես նաև մշակույթի փոխակերպմանը (տրանսֆորմացիային),
- ընդունել եվրոպական չափորոշիչները և ուղենիշները որպես մասնագիտական ուսումնական հաստատությունների որակի ապահովման մեկնակետ
- ուսումնական հաստատություններում ձևավորել սովորող մշակույթ
- վերանայել ուսումնական հաստատությունների ղեկավարների մոտեցումները
- վերանայել ուսուցման և ուսումնառության մոտեցումները՝ հիմնվելով ժամանակակից մանկավարժական ձեռքբերումների վրա
- վերանայել և ձևափոխել կրթական ծրագրերն ըստ Որակավորումների ազգային և Եվրոպական շրջանակների, Դուբլինյան բնութագրիչների: Այս շրջանակներում ՈԱԱԿ-ը պատասխանատու է Որակավորումների ազգային շրջանակի իրականացման, ինչպես նաև աստիճանաշնորհման գործընթացի որակի համար
- վերանայել պրոֆեսորադասախոսական կազմի որակավորումներին ներկայացվող պահանջները և ապահովել դրանց իրականացումը
- վերանայել ուսանողների գնահատման համակարգը՝ կապ ստեղծելով վերջինիս և նախատեսված ուսումնառության արդյունքների միջև

- ձևավորել հաշվետվողականության մեխանիզմներ՝ հասարակությանը ցածրորակ կրթությունից ապահովագրելու նպատակով
- նպաստել ՀՀ մասնագիտական կրթության ինտեգրմանը և միջազգայնացմանը Բարձրագույն կրթության Եվրոպական տարածքին,
- ձևավորել փորձագետների բազա, ինչը կերաշխավորի ուսուցման և ուսումնառության, ինչպես նաև վարչարարական մակարդակներում որակի ապահովումը
- վերանայել հիմնական սպառողների՝ ուսանողների, և հիմնական շահակիցների՝ պրոֆեսորադասախոսական կազմի և գործատուների դերը
- ամրապնդել ուսումնական հաստատության և աշխատաշուկայի միջև փոխհարաբերությունները
- ուժեղացնել ուսումնական հաստատության և հասարակության միջև կապերը
- ապահովել հրապարակայնությունը և թափանցիկությունը:

Այսպիսով, փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը առաջնահերթ է դարձնում հաշվետվողականության, որակի ապահովման և, հետևաբար, որակի մշակույթի ձևավորման ուղղությամբ արվող քայլերը, որպեսզի մասնագիտական ուսումնական հաստատություններում կատարվող փոփոխությունները հաջողությամբ պսակվեն:

Որակի արտաքին ապահովում

Ներկայումս, ՀՀ որակի արտաքին ապահովման համակարգը փորձում է գտնել որակի ապահովման ամենահարմար մոդելը մասնագիտական կրթության համար: Այն ժամանակ, երբ 1999թ. «Կրթության մասին օրենքը», ինչ-որ առումով հապճեպորեն, օրինական հիմք է ստեղծում արագորեն մասնավորեցվող մասնագիտական կրթության ոլորտի համար, արդեն 2005թ. Կառավարությունը ներկայացնում է նոր որոշում Որակի արտաքին ապահովման համար: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համար պետական կրթական չափորոշիչների մշակում» որոշման արդյունքում ձևավորված համակարգը ավելի շատ հիշեցնում էր նախկին խորհրդային համակարգը՝ բաղկացած լիցենզավորումից, ատեստավորումից և հավատարմագրումից, որը չէր կենտրոնանում գործընթացների, որակի կառավարման վրա, այլ ներառում էր միայն անփոփոխ գնահատման չափորոշիչներ՝ առանց բարելավման և զարգացման: Նախորդ համակարգի անհամապատասխանության պատճառով 2008թ. գործընթացը ոչ պաշտոնապես դադարեցվեց և հիմնադրվեց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (ՈԱԱԿ): ՈԱԱԿ-ն այժմ որակի ապահովման նոր շրջանակի ձևավորման փուլում է:

Այսպիսով, հաշվի առնելով երկրի մասշտաբը, որտեղ որակի ապահովման նոր համակարգի ստեղծման և ղեկավարման համար անհրաժեշտ ֆինանսական և մարդկային ռեսուրսները ավելի սահմանափակ են, քան զարգացած երկրներում (և՛ պետական, և՛ ոչ պետական ուսումնական հաստատություններում, և՛ բարձրագույն, և՛ նախնական ու միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում), որակի ապահովման

համապարփակ շրջանակը պետք է դիտվի որպես աջակցող համակարգի ծախսարդյունավետությունը բարձրացնող միջոց: Չնայած ծախսարդյունավետության նկատառումներին, պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունների լիցենզավորումն իրականացնում է ՀՀ ԿԳՆ Լիցենզավորման վարչությունը, մինչդեռ որակի արտաքին ապահովումը՝ իր հիմնական գործիքներից մեկի՝ հավատարմագրման գործառույթի հետ զուգահեռ, լիազորված է անկախ գործակալություն հանդիսացող ՈԱԱԿ-ին:

Իսկապես, թե՛ լիցենզավորումը, թե՛ հավատարմագրումը կարգավորիչ գործառույթներ են, որոնք ուղղված են որակի վերահսկմանը, մինչդեռ որակի ապահովման համակարգը ուղղված է որակի բարելավմանը: Պետք է նկատել, սակայն, որ *վերահսկման* և *բարելավման* նպատակների հակադրումը ՈԱ ավելի զարգացած համակարգեր ունեցող երկրներում նվազելու միտում է դրսևորում, քանի որ հավատարմագրումը դառնում է որակի արտաքին ապահովման ամենատարածված մեխանիզմը: Հաշվի առնելով ՀՀ մասնագիտական կրթության առանձնահատկությունները, ձևավորված մշակույթը և զգալի խորհրդային և հետխորհրդային ժառանգությունը, այժմ որակի ապահովումը վերահսկման փոխարեն պետք է շեշտադրի բարելավումը, և ընդունի <<որակը որպես համապատասխանությունը նպատակներին>> սահմանումը: Մասնավորապես, համակարգի վերականգնման նպատակով որակի ապահովումը պետք է ուղղված լինի բարելավմանը, և այն պետք է դիտվի որպես բարեփոխում՝ կազմակերպչական մակարդակում փոփոխություններ իրականացնելու նպատակով, ինչը կհանգեցնի սովորող մշակույթի ձևավորմանը, որը շատ կարևոր է գիտելիքահեն տնտեսության ձևավորման համար: Լիցենզավորման և որակի ապահովման համահունչությունն ապահովելու համար որակի ապահովման բաղադրիչները պետք է ներառվեն լիցենզավորման պայմանների մեջ:

Հետևաբար, ամենակարևոր խնդիրը մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի մշակույթի սերմանումն է, ինչը կարելի է իրականացնել ՈԱԱԿ-ի միջոցով՝ վերջինիս լիազորելով մասնագիտական կրթության հատվածի կարողունակության ընդլայնմանը նպաստող գործառույթով: Այդ շրջանակում ՈԱԱԿ-ը կաջակցի որակի ներքին ապահովման մեխանիզմների ստեղծմանը՝ խթանելով որակի և սովորող մշակույթի ձևավորմանն ուղղված միջոցառումները և կապեր ձևավորելով պետության շեմային պահանջների և ՄՈՒՀ-երում գործող որակի չափանիշների միջև:

Մարտահրավերներ

Համընդհանուր միտումներ

Աշխարհում ՄԿ համակարգերում նկատվող միտումներն այսօր ընթանում են կրթության պայմանների ու ակնկալիքների փոփոխությունների ուղիով: Այդ միտումները տանում են

դեպի «գիտելիքահեն հասարակություն», փոխգործակցության ծավալների և տեմպերի աճի, տեղեկատվական և հաղորդակցական նոր տեխնոլոգիաների բուռն զարգացման, ինչպես նաև բնակչության, հատկապես՝ որակյալ մարդկային ռեսուրսների արագ աճի ու շարժունության: Որպես զարգացման կարևորագույն գործոնի՝ գիտելիքի դերի բարձրացումը, ինչպես նաև օր-օրի խստացող միջազգային մրցակցությունը Հայաստանի մասնագիտական կրթական համակարգի առջև այժմ ավելի քան երբևէ լուրջ պահանջներ է դնում:

Միևնույն ժամանակ պետք է հասկանալ, որ ՄՈՒՀ-երը կանգնած են նախկին էլիտար կարգավիճակից դեպի հասարակության ավելի լայն հատվածներ շրջվելու հրամայականի առջև: Գլոբալիզացիան մեծացնում է այն ճեղքվածքը, որն առկա է հարուստ և աղքատ խավերի, դեպի համացանց մուտք ունեցող և դրանից զուրկ սոցիալական խմբերի միջև՝ թե՛ առանձին երկրներում և թե՛ միջազգային մակարդակում: Հետևաբար, լայն հնարավորություններ ստեղծելով ակտիվ տեղաշարժվող և բարձր որակավորում ունեցողների համար՝ գլոբալիզացիան, դրա հետ մեկտեղ, փակում է դռները կրթական ցածր մակարդակ ունեցող խավերի առջև:

Գլոբալիզացիայի առավել տեսանելի խորհրդանիշներն ու միջոցներն են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) արագ զարգացումն ու գիտելիքի ձևավորման և տարածման համաշխարհային ցանցերի ստեղծումը: Գիտելիքի ստեղծումը և կառավարումն ավելի դյուրին է դարձել համակարգիչների և համացանցի շնորհիվ: Գլոբալիզացիան, այսպիսով, յուրաքանչյուր երկրի համար զարգացման լայն հնարավորություններ է ստեղծում՝ միևնույն ժամանակ անուղղակիորեն նախազգուշացնելով, որ առանց համապատասխան քայլեր ձեռնարկելու երկիրը կանգնելու է որակյալ մարդկային ներուժից զրկվելու վտանգի առջև:

Քաղաքական մարտահրավերներ

Ողջ աշխարհում գլոբալիզացիոն գործընթացների պայմաններում աշխատաշուկայի զարգացմանն ուղղված նոր չափորոշիչներ և չափանիշներ են որդեգրվում, մինչդեռ Հայաստանում ՄԿ համակարգը գլոբալ միտումներին համապատասխան զարգացնելու և՝ հետևապես, միջազգային համակարգին ինտեգրվելու ճանապարհին շարունակում են խոչընդոտ հանդիսանալ ոլորտի քաղաքականության մշակման հարցերում կարծրատիպային նախկին մոտեցումները: Չնայած մասնագիտական կրթությունը բարեփոխելու վերջին տասնամյակում գործադրված հսկայական ջանքերին, վերջինիս զարգացումը դեռևս համարժեք չէ ո՛չ ընդհանուր բարեփոխումների տրամաբանությանը, ո՛չ էլ, մասնավորապես, որակի ապահովման պահանջներին:

Հայաստանյան իրականության՝ համակարգի համար վնասակար գործոններից է քաղաքական կայունության պակասը: Վերջին 15 տարիների ընթացքում Կրթության և գիտության նախարարները հաճախակի փոփոխվում էին՝ միջին հաշվով պաշտոնավարելով երկու տարի՝ 1995-1995; 1995-1996; 1996-1998; 1998-1999; 1999-2001; 2001-2003; 2003-2007; 2007-2008; 2008-2009: Չնայած քաղաքական հիմնական կուսակցությունների կրթական ռազմավարությունները և նպատակները միմյանցից առանձնապես չեն տարբերում, գործնականում դա անմիջական ազդեցություն ունեցավ բարեփոխումների մշակման, իրականացման և շարունակականության վրա, քանի որ վերանշանակվող նախարարները տարբեր քաղաքական կուսակցություններ ներկայացնելով՝ տարբեր մոտեցումներ և առաջնահերթություններ էին առաջադրում կրթության բնագավառում:

Որպես արդյունք, 2005 թ.-ին ստորագրված Բոլոնիայի հռչակագիրը շատ փոքր ազդեցություն ունեցավ բարձրագույն կրթության վրա: Ավելին, ռազմավարական զարգացումները՝ հատկապես որակի ապահովման ոլորտում, հապաղում են: Այսպիսով, քաղաքականության մշակման և իրականացման համար ոչ բարենպաստ պայմաններում վերափոխումներն առավելապես կրում են նմանակման բնույթ և ընթանում ավելի շատ տեսական քննարկումների, քան գործնական տեղայնացման ուղղությամբ: Որակի ապահովման ոլորտում գործընթացների խթանման նպատակով էլ ՀՀ Կառավարությունը ստեղծել է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը՝ որպես մի կազմակերպություն, որը, Կառավարության հետ անմիջականորեն կապի մեջ լինելով, միևնույն ժամանակ բոլորովին ինքնուրույն կերպով, կոչված է համակարգային լուծումներ տալու որակի ապահովման գործընթացներին:

Տնտեսական մարտահրավերներ

ՀՀ կառավարությունը երկրի տնտեսական զարգացման քաղաքականությանը զուգահեռ ներկայում քայլեր է ձեռնարկում մասնագիտական կրթության նոր մոտեցումներով ֆինանսավորման ուղղությամբ՝ դրա նպատակայնությունը և արդյունավետությունն ապահովելու համար, ու այդ առումով առաջիկայում անելիքներ դեռ շատ կան: ՀՀ մասնագիտական կրթության զարգացմանը խոչընդոտող խնդիրներից է մնում աշխատաշուկայի և մասնագիտական կրթության միջև թույլ կապը կամ դրա իսպառ բացակայությունը: Պատրաստ չլինելով ներկայացնելու անհրաժեշտ կոմպետենցիաների պահանջարկ՝ տեղական աշխատաշուկան որպես տնտեսական առաջատար և կրթական գործընթացի ակտիվ շահակից հանդես գալու կարողունակություն չի դրսևորում: Բացի դրանից, ՀՀ մասնագիտական կրթության համակարգում դեռևս կիրառվում են դասավանդման և ուսումնառության ավանդական՝ ոչ ճկուն մոտեցումներ, ուսանողամետ կրթության մարտահրավերին համակարգը դժվարանում է դիմագրավել: Ուսումնառության

արդյունքներով կրթական ծրագրերի նկարագրումը հանգուցային խնդիր է շուկայի կողմից դեռևս չձևավորված կոմպետենցիաների պահանջարկին համապատասխանելու համար: Դրա բացակայությունը դժվարացնում է մասնագիտական կրթության կողմնորոշվածությունը դեպի շուկա և հավելյալ խոչընդոտներ է առաջացնում աշխատուժի շարժունության համար:

Նման իրավիճակում փոփոխության առաջին ազդակները պետք է նախաձեռնվեն մասնագիտական կրթության համակարգի ներսից՝ այն շրջելով դեպի ուսուցման/ուսումնառության ուսանողամետ համակարգ և ուսումնառության արդյունքների ձևակերպմամբ կրթական ծրագրերի մշակում: Այդ մոտեցումը դրական ազդեցություն կթողնի և կարագացնի շուկայի զարգացումը՝ դրանով իսկ խթանելով վերջինիս կայացումը: Բացի դրանից, այդպիսով կշեշտադրվի և կուժեղացվի մասնագիտական կրթության սոցիալական պարտավորությունների գործոնը: Ներկայիս պայմաններում անցումը դեպի կրթության արդյունահենք մոդել կարող է հնարավոր դառնալ միայն գլոբալ կրթական համակարգի հետ լայն և ինտենսիվ համագործակցության շրջանակներում: Այն կարող է իրականացվել սոցիալական և տնտեսական մարտահրավերներին արձագանքելու բնականոն գործընթացի միջոցով և դրանով պայմանավորված՝ համատեքստի փոփոխությամբ: Այդպիսի մոտեցումը հնարավոր կդարձնի առաջնային արձագանքը գլոբալ շուկայի առաջադրած պահանջների նկատմամբ՝ մինչև որ ապահովվի տեղական շուկայի զարգացումն ու կայացումը: Այդ առումով, հայաստանյան շրջանավարտների համար առկա և ձևավորվող շուկայի ոլորտների աջակցումն ու բարելավումն կարևոր նշանակություն է ձեռք բերում: Այսպիսով, ՀՀ կառավարության սահմանած անցումային ժամանակաշրջանը խթանելու է այս նոր ոլորտներում կատարվող հետազոտությունները, տեղեկատվության տրամադրումը և տարածումը ՄՈՒՀ-երում, ինչպես նաև բարեփոխումներն ու նորարարությունները կազմակերպելու ուղղությամբ ոլորտի ղեկավարների վերապատրաստումը:

Իրավական մարտահրավերներ

Մասնագիտական կրթական դաշտն այսօր կարգավորվում է՝ «Կրթության մասին» (1999 թ.), «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» (2004 թ.) «Նախնական/ արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության մասին» (2005 թ.) օրենքներով: Բոլոնիայի գործընթացին Հայաստանի անդամակցելուց հետո սկսվեց բարձրագույն մասնագիտական կրթության բարեփոխումների մի նոր շրջան: Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների համատեքստում՝ ինտեգրումն ապահովելու նպատակով, իրականացվեցին ու մինչ օրս էլ իրականացվում են օրենսդրական փոփոխություններ: Սակայն մասնագիտական կրթության համակարգային զարգացման մոտեցման բացակայության պայմաններում բարեփոխումների խթանմանն ուղղված որոշակի օրենսդրական փոփոխությունները, այնուամենայնիվ, համակարգային, ամբողջական բնույթ չեն կրել: Արդյունքում, մասնագիտական կրթությունը կանոնակարգող

իրավական դաշտում ստեղծվել է մի վիճակ, որը բնորոշվում է հակասություններով, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի անկատարությամբ, դրանց ոչ լիարժեք կիրառմամբ կամ կիրառման մեխանիզմների բացակայությամբ։

«Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքները սահմանում են, որ պետական հավատարմարգումը պետության կողմից բուհի կրթական ծրագրի, մասնագետների պատրաստման որակի՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ճանաչումն է։ Սակայն մինչ օրս մշակված և ընդունված պետական կրթական չափորոշիչները մասամբ են անցել պետական գրանցում ու առայժմ դրանց իրավական ուժ ունելու հարցն առկախ է։ Այդ պատճառով տարբեր իրավիճակներում սույն հանգամանքը մեկնաբանվում է տարբեր կերպ։ Մի դեպքում առկա չափորոշիչները ընդուվել են որպես հիմք ու դրանցով իրականացվել է ՄՈՒՀ-երի լիցենզավորում և հավատարմագրում, մյուս դեպքում՝ դրանք դիտարկվում են որպես իրավազուրկ փաստաթղթեր, քանի որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գերատեսչական նորմատիվ ակտերը ենթակա են պետական գրանցման։

Բացի այդ, «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության ոլորտում Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրագործման ժամանակացույցի» (ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 2-ի N 43 արձանագրային որոշում,) համաձայն՝ հաստատվել է բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկը։ Սակայն մինչ օրս այդ մասնագիտությունների կրթական չափորոշիչներ չկան, ինչը և խոչընդոտում է որակի ապահովման համակարգի ներդրմանը և զարգացմանը, հավատարմագրման իրականացմանը։

Մյուս կողմից, մասնագիտական կրթության ոլորտի համակարգային կարգավորմանը կոչված գլխավոր փաստաթուղթը՝ Որակավորումների ազգային շրջանակը դեռևս մշակման փուլում է։ Դրան զուգահեռ մշակվում ու հաստատվում են պետական կրթական չափորոշիչները, մինչդեռ ՈԱՇ-ը պետք է հիմք հանդիսանար չափորոշիչների մշակման համար։ Սահմանված չէ չափորոշիչների հստակ ձևաչափը։

Կրթական համակարգի զարգացման, որակի ապահովման մեխանիզմների կայացման համար ներկայումս անխուսափելի անհրաժեշտություն է դարձել գործատուների մասնակցության խթանումը մասնագիտական կրթության կազմակերպման և կառավարման գործընթացներում, ավելին՝ կրթության ոլորտում նրանց կողմից ներդրումների կատարումը։

2001 թ.-ին ընդունվել է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում է նաև բուհերի կառավարման մարմինների ձևավորումը։ 2005 թ.-ին հաստատվել է «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների խորհուրդների ձևավորման կարգը», ըստ որի՝ խորհրդի կազմում հավասար համամասնությամբ ընդգրկվում են *հիմնադրի (Կառավարության), լիազոր մարմնի (ԿԳ նախարարության), բուհի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության* ներկայացուցիչները։ Լիազոր մարմնի կողմից որպես խորհրդի անդամներ պետք է ներգրավվեն տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ այդ թվում գործատուներ, սակայն այդ տեղերի մի հատվածը հաճախ տրամադրվում է նույն բուհի ներկայացուցիչներին։ Արդյունքում՝ տարբեր ոլորտների

ներկայացուցիչների՝ այդ թվում գործատուների դերակատարությունը, ըստ էության, կրում է խորհրդանշական բնույթ: Դա բացատրվում է նաև այն հանգամանքով, որ կայացած աշխատաշուկայի բացակայության պայմաններում գործատուները չունեն շրջանավարտների պատրաստվածության որակի նկատմամբ հստակ ձևակերպված ակադեմիական պահանջներ: Ըստ էության չի գործում նաև շրջանավարտների հետ մշտական հետադարձ կապի համակարգը:

Զարգացմանը խոչընդոտող մարտահրավեր կարելի է համարել նաև օրենսդրական դաշտում լրացումներ կատարելու կոշտ ընթացակարգը, ինչը հավելյալ բարդություններ է առաջացնում ցանկացած փոփոխության պարագայում: Սակայն հարկ է նշել, որ ՄԿ համակարգային զարգացման մոտեցման ու ռազմավարության՝ նպատակների ու ակնկալիքների բացակայության պայմաններում, որը հստակորեն կնախանշեր մեր ՄԿ համակարգի ապագան: Այս պայմաններում ավելորդ է խոսել իրավական դաշտում փոփոխությունների իրագործման ճկուն կամ կոշտ մեխանիզմների մասին: Հետևաբար, անհրաժեշտ է փուլ առ փուլ սահմանել ռազմավարական հստակ մոտեցումներ՝ ամրագրելով զարգացման անցումային շրջանի խնդիրները, որոնց հաղթահարումը, աներկբայորեն, իրավական առումով պետք է նախատեսի հնարավորինս ազատական մոտեցումներ:

Սոցիալական մարտահրավերներ

Սոցիալական ինտեգրումը կրթական բարեփոխումների նախապայմանն է: Դրան հասնելու համար կրթության, և մասնավորապես, որակի ապահովման հայեցակարգը պետք է հաշվի առնի նոր իրողությունները, որոնք նշանակալի ազդեցություն են ունենում կրթական գործընթացի վրա: Այդ իրողությունները որոշակի օբյեկտիվ ռիսկեր են պարունակում կրթության համար, մասնավորապես սոցիալական կապերի՝ անցումային հասարակություններին բնորոշ աղճատումը, անհատական և հանրային շահերի հակադրումը բացասաբար է անդրադառնում կրթության մատչելիության և որակի ապահովման խնդիրների վրա: Այս տեսանկյունից որակի ապահովման դերն պետք է լինի հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացումը՝ որակյալ կրթություն ստանալու իրենց քաղաքացիական իրավունքի վերաբերյալ:

Որակի ապահովման ամուր համակարգը կարող է պաշտպանել հասարակությունը անորակ կրթություն ստանալու վտանգից՝ կրթական ծառայությունները մասնագիտական կրթության մակարդակում հասարակության համար թափանցիկ դարձնելով, այդ թվում՝ դրանք որակավորումների ազգային շրջանակի պահանջներին համապատասխանեցնելով և դրանով իսկ պահպանելով և շարունակաբար բարելավելով կրթության որակը: Այսպիսով, ներկայիս ռազմավարական ծրագիրը նախատեսում է որակյալ կրթության իրենց իրավունքների և ավելի լայն առումով ժողովրդավարական իրավունքների վերաբերյալ

հանրության իրազեկվածության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումների միջոցով ամուր հիմքեր ստեղծել սոցիալական համախմբան համար:

Տեխնոլոգիական մարտահրավերներ

ՄՈՒՀ-երը, որ պիտի լինեին Հայաստանում ՏՀՏ ծառայությունների առաջնագծում, զգալիորեն հետ են ընկել գիտելիք ստեղծելու և տարածելու գործընթացից և մեծ մասամբ թույլ են պատրաստված նման դերակատարման համար, քանի որ նրանց տեղեկատվական ենթակառուցվածքները համարժեքորեն զարգացած չեն: Եվրոպական և ամերիկյան, ինչպես նաև զարգացած (կամ անգամ որոշ զարգացող) այլ երկրների իրենց գործընկերներ-հաստատությունների համեմատ Հայաստանի ՄՈՒՀ-երը գտնվում են անբավարար պայմաններում՝ տեղեկատվական գլոբալ տնտեսության և գիտելիքի համակարգերի առավելությունները կիրառելու և Հայաստանում դրանք տարածելու առումով: Հետևապես ՏՀՏ զարգացումն ու կիրառումը ՀՀ ՄԿ համակարգում դառնում է հանգուցային և հրատապ խնդիր երկրի և աշխարհի միջև գիտելիքային, տեխնոլոգիական և տնտեսական խզումը մեղմելու համար: Հատուկ կարևորություն ունի հաստատություններում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը, ինչը որակի ապահովման նախապայմաններից է կրթության բոլոր աստիճաններում:

ՈԱԱԿ-ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՈԱԱԿ-ը որակի ապահովման գործակալություն է, որն անկախ է ՀՀ կառավարությունից և մասնագիտական ուսումնական հաստատություններից:

Մասնագիտական կրթության ծառայությունների որակի շարունակական բարելավման միջոցով ՈԱԱԿ-ը ձգտում է ապահովել հանրային վստահությունը, սոցիալական համախմբվածությունը, հավասարությունը, պատասխանատվությունը և մրցակցությունը:

Այդ ամենը ՈԱԱԿ-ն իրականացնելու է.

- պարտադիր ինստիտուցիոնալ փորձաքննության և կամավոր ծրագրային հավատարմագրման միջոցով՝ բավարարելով ազգային շահակիցների կարիքները,
- համապատասխանելով որակի ապահովման միջազգային չափորոշիչներին,
- երաշխավորելով թափանցիկությունը միջազգային մակարդակում՝ նպաստելով Հայաստանի մասնագիտական կրթության դիրքի ամրապնդմանը Եվրոպայում,
- արժևորելով շահակիցների հետ սերտ համագործակցությունը որակի ապահովման համակարգի մշակման գործում:

ՈԱԱԿ-ի ռազմավարական խնդիրները հետևյալն են.

- երաշխավորել մասնագիտական կրթության համապատասխանությունը ընդունված չափորոշիչներին,
- աջակցել մասնագիտական կրթության ծառայությունների որակի շարունակական բարելավմանը՝ համագործակցելով մասնագիտական կրթության շահակիցների հետ,
- խթանել ՄՈՒՀ-երի պատասխանատվությունը որակի ապահովման հանդեպ,
- երաշխավորել ՄՈՒՀ-երում տրվող կրթության որակի վերաբերյալ թափանցիկ և ճշգրիտ տեղեկատվության հանրային հասանելիությունը,
- կիրառել միջազգային լավագույն փորձը ՄՈՒՀ-երի կրթական ծառայությունների գնահատման ընթացքում:

ՈԱԱԿ-ը գիտակցում է ՄՈՒՀ-երի ունեցած պարտավորություններն ու պատասխանատվությունը՝ որակի ապահովման ճշգրիտ գործընթացներ իրականացնելու և պահպանելու համար: Քանի որ գոյություն չունի որակի ապահովման որևէ «ճշգրիտ» մոդել, ՈԱԱԿ-ը ակնկալում է, որ յուրաքանչյուր ՄՈՒՀ կմշակի իր սեփական ծրագիրը՝ այս փաստաթղթում սահմանած ռազմավարությունների սահմաններում:

ՈԱԱԿ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Նպատակ 1: **ՈԱԱԿ կարողությունների ձևավորում.** բարելավել մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային համակարգը:

Նպատակ 2: **Որակի տարածքի ստեղծում. ստեղծել մասնագիտական կրթության որակի ապահովման արտաքին համակարգ՝** որակի ապահովման քաղաքականությունը և ընթացակարգերը համապատասխանեցնելով միջազգային չափորոշիչներին:

Նպատակ 3: **Որակի մշակույթի ձևավորում**. Աջակցել ՄՈՒՀ-երում որակի մշակույթի ձևավորմանը, ինչը կհանգեցնի սովորող մշակույթի ձևավորմանը և, հետևաբար, համակարգի փոխակերպմանը (տրանսֆորմացիա):

Նպատակ 4: **Որակի ապահովման փորձագետների բազայի հիմնում:**

Նպատակ 5: **Միջազգայնացում. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ ՈԱԱԿ-ի միջազգային ճանաչման համար:**

SWOT վերլուծություն

Անցումային շրջանի ռազմավարական պլանավորման ընթացքում կատարվելու է Հայաստանի ՄԿ համակարգի առջև գլոբալ միտումների և զարգացումների ազդեցությամբ ծառացած նոր մարտահրավերների, ԿԳՆ, ՈԱԱԿ և ՄՈՒՀ-երի դերերի, գործառույթների և կառուցվածքի կառավարման վերլուծական իմաստավորում: Ստորև բերվող SWOT վերլուծության խնդիրն է երաշխավորել հիմնական շահակիցների ակտիվ մասնակցությունը և ազդեցությունը ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման խնդիրների լուծման գործընթացում: Վերլուծությունը հնարավորություն է տալիս դիտարկելու ՀՀ կառավարության կողմից հաստատված անցումային ժամանակաշրջանը՝ հայտնաբերելով *ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները և վտանգները*:

Ուժեղ կողմեր	**Թույլ կողմեր**
ՀՀ կառավարության շահագրգռվածությունը՝ կարգավորելու ՄԿ համակարգը որակի ապահովման բաղադրիչների ներդրման միջոցով	Գործընթացը կազմակերպելու և ծրագիրն իրականացնելու համար համապատասխան մարդկային ռեսուրսների պակաս
ՄԿ ոլորտը կանոնակարգելու և որակի մշակույթ ձևավորելու գործում շահագրգռված համապատասխան կազմակերպությունների և մարմինների առկայություն	Բոլոր շահեկիցներին հասկանալի միասնական ոլորտային բառապաշարի բացակայությունը թյուրըմբռնում է առաջացնում
ՄՈՒՀ-երը և քոլեջները շահագրգռված են նախապատրաստվելու ակնկալվող հավատարմագրմանը՝ շնորհվող որակավորումների ճանաչումն ապահովելու համար	Որակի ապահովման տեղական փորձագետների պակաս
ՄԿ համակարգում արմատական փոփոխություններ կատարելու խիստ անհրաժեշտություն	Կրթական արդյունքներով ձևակերպված հստակ չափորոշիչների բացակայություն
ՈԱ գործընթացներին միջազգային կազմակերպությունների աջակցությունը:	ՈԱ գործընթացներ կազմակերպելու և կառավարելու փորձի պակաս
	Անհամաչափորեն զարգացած ՄԿ համակարգը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում ՈԱ պատասխանատուների նոր ձևավորվող կազմի համար:

Հնարավորություններ	**Վտանգներ**

Միջազգային մակարդակում ցուցադրելու է ժողովրդավարությանը նպաստելու և ժողովրդավարական հասարակություն ձևավորելու նպատակով արմատական վերափոխումներ կատարելու Հայաստանի վճռականությունը	Օրենսդրական բացերը կարող են խոչընդոտ հանդիսանալ գործընթացի հարթ ընթացքի համար
Ստեղծելու է միջազգային համագործակցության ավելի շատ ուղիներ:	ՄՈՒՀ-երի ղեկավարության հետ հավանական շահերի բախումը կարող է նրանց կողմից դիմադրության պատճառ դառնալ:
Կներդրվի լավագույն փորձը և կօգտագործվեն եվրոպական փորձագիտական կարողությունները	Քաղաքական և տնտեսական բնագավառներում հավանական արմատական փոփոխությունները կդրդեն գործընթացի կազմակերպիչներին դադարեցնելու այն
ԵԲԿՏ ինտեգրվելու համար պատշաճ հիմքեր կձևավորի	Գործընթացի բովանդակության աղավաղումը և շեղումը եվրոպական չափորոշիչներից և չափանիշներից կարող են անդրադառնալ ՈԱԱԿ-ի ինքնահավաստագրման և ճանաչման վրա՝ դրանով իսկ դժվարացնելով Հայաստանի ՄՈՒՀ-երի կողմից շնորհվող աստիճանների ճանաչումը
Նոր ուղիներ է ձևավորում ՄՈՒՀ-երի կառավարման մեջ ՏՀՏ ներդնելու ուղղությամբ՝ այդպիսով նպաստելով համագործակցությանը և թափանցիկությանը, ինչպես նաև երաշխավորելով գործընթացի արդյունավետ կազմակերպումը	
Միջավայր է ձևավորում բոլոր շահեկիցների համար ՄՈՒՀ-երի զարգացման համար պատասխանատվություն ստանձնելու և մասնակցություն ունենալու համար	Շահեկիցների մասնակցության իներտությունը կարող է հանգեցնել գործընթացի ձախողման:

ՈԱԱԿ-ի որակի ապահովման ուղենիշ/սկզբունքները

ՈԱԱԿ-ը երաշխավորում է ուսումնական հաստատություններին մատուցվող ծառայությունների որակը և հուսալիությունը հետևյալ չափորոշիչների պահպանման միջոցով.

- ՈԱԱԿ-ի մատուցած ծառայությունները պետք է հասկանալի, թափանցիկ և կազմակերպորեն ու ֆինանսապես արդյունավետ լինեն շահակիցների համար,
- ՈԱԱԿ-ի չափանիշները պետք է հստակ համապատասխանեն որակի ապահովման նպատակին,
- ՈԱԱԿ-ի ծառայությունները պետք է լինեն իրավաչափ, հուսալի և գործնական, իսկ որոշումների կայացումը պետք է կատարվի սահմանված չափանիշներին համապատասխան,
- ՈԱԱԿ-ի հիմնական պատասխանատվությունը ներպետական և միջազգային չափորոշիչներին համապատսխան որակի ապահովման գործընթացների շարունակական բարելավմանն ուղղված ծառայությունների մատուցումն է կրթական հաստատություններին,
- ՈԱԱԿ-ի ծառայությունները պետք է հասանելի լինեն մասնագիտական կրթական բոլոր հաստատություններին, որոնց համար դա պահանջվում է օրենքով։
- ՈԱԱԿ-ի ծառայությունները միտված են պաշտպանելու ուսանողներին ցածրորակ կրթական ծառայություններից և արդյունքներից։

Իրականացման ռազմավարությունը

Ռազմավարական ծրագրի նպատակներն ու հետագա գործողությունները մշակվելու և իրականացվելու են ընթացիկ ծրագրերի միջոցով: Յուրաքանչյուր ծրագրի իրականացումը դիտարկվելու է համապատասխան ժամանակացույցի հիման վրա և անհրաժեշտության դեպքում ճշգրտվելու ՈԱԱԿ կառավարման խորհրդի հետ: Յուրաքանչյուր տարի շահակիցների քննարկմանն է ներկայացվելու ծրագրի իրականացման զեկույցը:

Աղյուսակ 1: Գործողությունների ծրագիր

Նպատակ	Խնդիրներ	Գործողություններ		Ժամկետներ
Նպատակ 1: **ՈԱԱԿ կարողությունների ընդլայնում. բարելավել մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային համակարգը:**	**Խնդիր 1.1:** Վերջնականացնել որակի ապահովման արտաքին համակարգը և ստանալ հասարակության հավանությունը	1.1.1	Վերջնականացնել և ներկայացնել հաստատման ՈԱԱԿ-ի կազմակերպչական հիմնահարցերը:	**2010**
		1.1.2	Իրականացնել պատասխանատվությունների և լիազորությունների բաշխում որակի ապահովման արտաքին և ներքին համակարգերի, ինչպես նաև լիցենզավորման և հավատարմագրման մ իջև:	**2011**
		1.1.3	Վերանայել իրավական դաշտը մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման համակարգի ճկուն աշխատանքը ապահովելու համար:	**2010**
		1.1.4	ՈԱԱԿ-ի, ԿԳՆ-ի, և ՀՀ Կառավարաության և ՄՈՒՀ-երի պատասխանատվությունների և դերերի պարզաբանում:	**2011**
	Խնդիր 1.2: Հիմնել ՈԱԱԿ-ի ներքին ապահովման	1.2.1	Հիմնել ՈԱԱԿ-ի ներքին ապահովման համակարգ, որը կընդգրկի նրա բոլոր գործողությունները և համահունչ կլինի	**2010**

	համակարգ		Եվրոպական չափորոշիչներին (ESG):	
		1.2.2	Ստեղծել և իրագործել որակի ապահովման արտաքին և ներքին հետադարձ կապի մեխանիզմներ:	**2010-2011**
		1.2.3	Ստեղծել և կիրառման մեջ դնել որակի ապահովման ՈԱԱԿ ձեռնարկը:	**2010**
Նպատակ 2: **Որակի տարածքի հիմնում. հիմնադրել մասնագիտական կրթության որակի ապահովման արտաքին համակարգ , որը համարժեք է որակի ապահովման միջազգային չափորոշիչներին:**	**Խնդիր 2.1:** Հիմնել հավատարմագված ծրագրերի ազգային գրանցամատյան:	2.1.1	Հստակեցնել գրանցամատյանի նպատակները, խնդիրները և գործունեության շրջանակը:	**2010**
		2.1.2	Հստակեցնել պատասխանատվությունների շրջանակը:	**2010**
		2.1.3	Որոշել գրանցամատյանի գործողությունները իրականացնող ազգային մարմինը:	**2011**
	Խնդիր 2.2: Մեկնարկել որակի ապահովման շրջափուլային գործընթաց:	2.2.1	Մշակել ՈԱԱԿ-ի ուղենիշները, չափանիչները և չափորոշիչները:	**2010**
		2.2.2	Փորձարկել ՈԱԱԿ-ի ուղենիշները, չափանիչները և չափորոշիչները:	**2010**
		2.2.3	Լրամշակել ՈԱԱԿ-ի ուղենիշները, չափանիչները և չափորոշիչները:	**2011**
		2.2.4	Իրականացնել պիլոտային ծրագրեր 22 բուհերում	**2011-2012**
		2.2.5	Վերջնականացնել և հաստատել ՈԱԱԿ-ի ուղենիշները, չափանիչները և չափորոշիչները:	**2011**
		2.2.6	Մշակել ծրագրի ատեստավորման գործիքամիջոցներ:	**2011**
		2.2.7	Փորձարկել ծրագրի ատեստավորման գործիքամիջոցներ:	**2011**

		2.2.8	Լրամշակել ծրագրի ատեստավորման գործիքամիջոցներ:	**2011-2012**
		2.2.9	Մեկնարկել ծրագրի ատեստավորման գործընթացները:	**2012**
		2.2.10	Փորձարկել ինստիտուցիոնալ փորձաքննության գործիքամիջոցներ:	**2010**
		2.2.11	Լրամշակել ինստիտուցիոնալ փորձաքննության գործիքամիջոցներ:	**2011**
		2.2.12	Մեկնարկել ինստիտուցիոնալ փորձաքննության գործիքամիջոցներ:	**2011**
		2.2.13	Լրամշակել մասնագիտական ծրագրի հավատարմագրման փաստաթղթերը:	**2010**
		2.2.14	Իրականացնել ինստիտուցիոնալ փորձաքննություն 77 ՄՈՒՀ-երում:	**2012-2015**
		2.2.15	Իրականացնել մասնագիտական ծրագրերի հավատարմագրում կամավոր սկզբունքների հիման վրա:	**2013-2015**
Նպատակ 3: **Որակի մշակույթի ձևավորում. Աջակցել որակի մշակույթի ձևավորմանը:**	**Խնդիր 3.1:** Աջակցել ՄՈՒՀ-երի որակի ապահովման ներքին մեխանիզմների մշակմանը և ինտեգրմանը:	3.1.1	Աջակցել ՄՈՒՀ-երի որակի ապահովման ներքին ինֆրակառուցվածքի ձևավորմանը:	**2010-2015**
		3.1.2	Աջակցել որակի ապահովման ինֆրակառուցվածքի քաղաքականության և ընթացակարգերի մշակմանը:	**2010-2015**
		3.1.3	Աջակցել որակի ապահովման գործընթացի մեխանիզմների և գործիքամիջոցների մշակմանը և ներդրմանը:	**2011-2015**
		3.1.4	Մեկնարկել որակի ապահովման շրջափուլային գործընթաց:	**2011**

Խնդիր 3.2: Իրազեկության բարձրացում:	3.2.1	Կարիքների գնահատում	**2010**
	3.2.2	Վերապատրաստման նյութերի մշակում	**2010-2011**
	3.2.3	Աշխատաժողովների կազմակերպում վարչական աշխատակազմի համար:	**2010-2012**
	3.2.4	Աշխատաժողովների կազմակերպում պրոֆեսորադասախոսական աշխատակազմի համար:	**2011-2014**
	3.2.5	Հանդիպումներ ուսանողների և այլ շահակիցների հետ:	**2011-2015**
Խնդիր 3.3: Պաշտոնապես ճանաչել ՈԱԱԿ-ի կողմից մշակված ուղենիշները, չափանիշները և չափորոշիչները:	3.3.1	Շրջանառության մեջ դնել ՈԱԱԿ-ի կողմից մշակված ուղենիշները, չափանիշները և չափորոշիչները շահակիցների արձագանքը ստանալու համար:	**2010**
	3.3.2	Լրամշակել ՈԱԱԿ-ի կողմից մշակված ուղենիշները, չափանիշները և չափորոշիչները:	**2011**
	3.3.3	ՈԱԱԿ-ի կողմից մշակված ուղենիշների, չափանիշների և չափորոշիչների ճանաչում միջազգային փորձագետների կողմից:	**2011**
	3.3.4	Պաշտոնապես ճանաչել և ինտեգրել ՈԱԱԿ-ի կողմից մշակված ուղենիշները, չափանիշները և չափորոշիչները:	**2011**
Խնդիր 3.4: Նախաձեռնել ՈԱԱԿ-ի ճանաչման գործընթացը միջազգային	3.4.1	Հրավիրել ENQA փորձագետներին ՈԱԱԿ-ի գնահատման և ճանաչման համար:	**2014**
	3.4.2	Հիմնել ՈԱԱԿ հանձնախումբ գնահատման և ճանաչման գործընթացին	**2013**

	կազմակերպությունների կողմից:		նախապատրաստվելու և իրականացնելու համար:	
		3.4.3	Իրականացնել ՈԱԱԿ ինքնագնահատում	**2013**
		3.4.4	Վերջնական հաշվետվության պատրաստում և որոշման հրապարակում:	**2014**
ՆՊԱՏԱԿ 4: Որակի ապահովման փորձագետ-ներ՝ ստեղծել փորձագիտական խումբ խուսափելու համար որակի չստուգված համակարգեր ներդնելուց	**Խնդիր 4.1** Ստեղծել փորձագիտական մասնագիտացված խմբեր հիմնական առարկայական ուղղություններով	4.1.1	Որոշել հիմնական առարկայական ոլորտները ՈԱ փորձագետներ ընտրելու համար	**2011**
		4.1.2	Հավաքագրել և վերապատրաստել փորձագետների ոլորտի միջազգային զարգացումներին անմիջականորեն ծանոթացնելու միջոցով	**2010-2015**
	Խնդիր 4.2 Ստեղծել Որակի ապահովման ընկերակցություն	4.2.1	Մշակել առաքելություն, նպատակներ և խնդիրներ, որը նպատակաուղղված է տարբեր շահեկիցների միջև երկխոսության հաստատմանը	**2011**
		4.2.2	Ձևավորել գիտելիքների և բազմազան փորձառությունների կորպուս (գործատուների, ուսանողների, դասախոսների, մասնագետների)	**2011-2015**
		4.2.3	Նախաձեռնել առաջին կոնֆերանսը	**2012**
***Նպատակ 5*: Միջազգայնացում. Ստեղծել անհրաժեշտ պայմաններ ՈԱԱԿ-ի**	**Խնդիր 5.1:** Նախաձեռնել ՈԱԱԿ-ի ճանաչում միջազգային մակարդակում:	5.1.1	Կազմակերպել ՈԱԱԿ-ի արտաքին գնահատում ESG համապատասխանությունը հավաստելու նպատակով:	**2014**
		5.1.2	Դիմել ENQA լիիրավ անդամակցության համար:	**2014**

միջազգային ճանաչման համար:	**Խնդիր 5.2:** Խթանել ՈԱԱԿ-ի միջազգայնացմանը ակտիվ ներգրավվելով միջազգային ծրագրերում:	5.2.1	Մասնակցել ENQA, ECA, ENQAHEE, EAU գործողություններին:	**2010-2015**
		5.2.2	Դիմել միջազգային դրամաշնորհներին:	**2010-2015**
		5.2.3	Մեկնարկել ՈԱԱԿ-ի առաջմղման ակտիվ գործընթացը:	**2010-2015**

Անցումային շրջանի միջոցառումներ

Նախատեսվում է սահուն և հաջորդական անցում դեպի որակի ապահովման գործընթացներ, հետևաբար, ամբողջ գործընթացը կբաժանվի 4 փուլերի: Յուրաքանչյուր փուլում նախատեսվում է փորձարկում, որին կհաջորդի իրական գործընթացը:

ՈԱԱԿ-ի անցումային շրջանի որակի ապահովման շրջանակի սահմաններում նախատեսվում է.

- Պարտադիր ինստիտուցիոնալ փորձաքննություն՝ երաշխավորելու համար համակարգի բարելավումը ու բարեփոխումը,
- Մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրում՝ ապահովելու շնորհիվող որակավորումների ճանաչումը ազգային և միջազգային մակարդակներում:

Առաջին փուլում (2010 – 2011) նախատեսվում են նախապատրաստական աշխատանքներ, որոնք հիմնականում ուղղված են անհրաժեշտ ուղենիշների, չափանիշների, չափորոշիչների, ինչպես նաև որակի արտաքին ապահովման քաղաքականության և ընթացակարգերի մշակմանը: Այս փուլում յուրաքանչյուր մշակում պետք է անցնի երեք գործընթաց՝ փորձարկում, լրամշակում և ամփոփում: Նաև նախատեսվում է իրականացնել երկու ինստիտուցիոնալ փորձաքննություն և երկու մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրում, ինչը առաջնահերթ է ՀՀ Կառավարության համար: ՈԱԱԿ-ը նաև նախատեսում է մի շարք վերապատրաստումներ և աշխատաժողովներ՝ թիրախային ուսումնական հաստատություններում անհրաժեշտ կարողություններ ձևավորելու համար:

Երկրորդ փուլում (2012-2013) նախատեսվում է ինստիտուցիոնալ փորձաքննություն: Ընդհանուր առմամբ Հայաստանում կան 230 պետական և մասնավոր ուսումնական հաստատություններ՝ ներառյալ մասնաճյուղերը, որոնցից 90-ը բուհեր են, իսկ 140-ը՝ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Ինստիտուցիոնալ փորձաքննությունը իրականացնելու համար ՈԱԱԿ-ը նախատեսում է ստեղծել երկու հանձնաժողով մեկ տարվա ընթացքում: Յուրաքանչյուր հանձնաժողով կազմակերպելու է փորձագետների 3-ից 4 խմբերի աշխատանքը՝ յուրաքանչյուր վեց ամսվա ընթացքում: Այս փուլը կնշանավորվի նաև ՄՈՒՀ-երի կողմից իրականացվող մասնագիտության կրթական ծրագրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և որակավորումների ու դիպլոմների շնորհման գործընթացներով, որի ընթացքում մասնագիտության կրթական ծրագրերի շրջանակներում կիրականացվի ուսանողների ուսումնառության արդյունքների մանրակրկիտ գնահատում, առանձնացնելով հաշվետվողականության գործոնը: Այս գործընթացի արդյունքները պետք է արտացոլվեն ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատման ձևաչափերում, և ՈԱԱԿ-ը՝ ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման շրջանակներում պետք է հավաստի մասնագիտության

կրթական ծրագրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և որակավորումների ու դիպլոմների շնորհման գործընթացների որակը ուսումնական հաստատություններ կատարված այցերի ժամանակ:

Երրորդ փուլում (2013-2014) նախատեսվում է մասնագիտության կրթական ծրագրերի կամավոր հավատարմագրման մեկնարկ: Հաշվի առնելով, որ պետական և ոչ պետական ՄՈՒՀ-երի կողմից առաջարկվող կրթական ծրագրերի ընդհանուր թիվը հասնում է ԲՈՒՀ-երի մակարդակում 240-ի և քոլեջների մակարդակում՝ 163-ի, և հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրում ծրագրերի համընկնումները, ՈԱԱԿ-ը նախատեսում է հավատարմագրել տարեկան մոտ 300 մասնագիտության կրթական ծրագիր: Անցումային ժամանակաշրջանը հաջողելու նպատակով ՈԱԱԿ-ը, օգտագործելով փորձագետների ներուժը, ձևավորելու է 12 ծրագրային հանձնախումբ: Յուրաքանչյուր հանձնախումբ կազմակերպելու է փորձագետների 3-ից 4 խմբերի աշխատանքը՝ յուրաքանչյուր վեց ամսվա ընթացքում: Ծրագրային հավատարմագրումը իրականացվելու է քլաստերային մոտեցմամբ, այնպես, որ փորձագետների յուրաքանչյուր խումբ միաժամանակ զբաղվի 3 կրթական ծրագրով՝ տարբեր հաստատություններում:

Չորրորդ փուլում (հունվար 2014 – դեկտեմբեր 2015) նախատեսվում է ինստիտուցիոնալ կարողության փորձաքննության և մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրման ամբողջական գործընթաց: Ռազմավարական ծրագիրն իր տրամաբանական ավարտին է հասնելու 2015 թվականին, որի արդյունքում կունենանք 77 փորձաքննություն անցած ՄՈՒՀ-եր, ըստ ներկայացված հայտերի հավատարմագրված մասնագիտության կրթական ծրագրեր՝ բերելով որակի ապահովման շրջափուլային գործընթացի մեկնարկին: ՈԱԱԿ-ը ենթադրում է նախատեսված պլաններից մինչև 20% շեղման հնարավորություն՝ տեխնիկական խնդիրների և ՈԱԱԿ-ի իրավասություններից չբխող պատճառների առաջացման դեպքում:

Աղյուսակ 2: Անցումային ժամանակաշրջանի ժամանակացույց

Տարիներ	Ինստիտուցիոնալ աուդիտ	Հավատարմագրում (կամավոր սկզբունքով)	Տարվա կտրվածքով իրականացված այցեր
2011-2012			
2012-2013	22		22
2013-2014	25	40	65
2014-2015	30	80	110
Ընդամենը՝	**77**	**120**	**197**

ՈԱԱԿ-ի եռամյա գործողությունների ծրագրի կարճ բովանդակությունը

Գործողություն	**Վերջնաժամկետ**
ՈԱԱԿ-ի պարտականությունները	
Մշակել ՈԱԱԿ-ի առաքելությունը	2010թ. դեկտեմբեր
Մշակել և ներկայացնել որակի ներքին ու արտաքին ապահովման գործընթացների, ինչպես նաև որակի արտաքին ապահովման և լիցենզավորման միջև առկա կապի վերաբերյալ ընդհանուր մոտեցումները	2011թ. դեկտեմբեր
Օրենսդրության վերանայում, ինչի շնորհիվ կկանոնակարգվեն Հայաստանում մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման գործընթացները	2010թ. դեկտեմբեր
Հստակեցնել ՈԱԱԿ-ի, ՀՀ կառավարության և մասնագիտական ուսումնական հաստատությունների դերը և պարտականությունները որակի ապահովման ազգային համակարգում՝ հաշվի առնելով բոլոր շահակիցների ընդհանրական տեսակետը	2011թ. դեկտեմբեր
Մշակել որակի ապահովման համար ազգային ցանց, որը կներառի մասնագիտական ուսումնական հաստատություններին և մասնագիտական կրթության ոլորտում շահակիցների այլ խմբերի	2011թ. դեկտեմբեր
ՈԱԱԿ-ը բավարարում է բոլոր պայմանները՝ Որակի ապահովման եվրոպական ցանցում ներգրավվելու համար	2012թ. դեկտեմբեր
Կազմակերպչական խնդիրներ	

Որքան հնարավոր է շուտ ձևավորել Խորհրդատուների խորհուրդ	2010թ. սեպտեմբերի 1
Կառավարման խարհուրդը սահմանում է ՈԱԱԿ-ի մարմինների դերերն ու պարտականությունները	2010թ. դեկտեմբեր
Ակտիվորեն ներգրավել շահակիցներին ՈԱԱԿ-ի քաղաքականության մշակման բոլոր գործընթացներում	2010, 2011, 2012թթ.
Մշակել գործիքներ ու ընթացակարգեր՝ շահակիցների առանձին խմբերի հետ փոխհարաբերությունների ձևավորման համար Ներկայացնել շահակիցների հետ փոխհարաբերությունների հաստատման վերաբերյալ հաշվետվություն	2011թ. հունիս
Զարգացնել ՈԱԱԿ-ի կարողությունները՝ վերապատրաստումների և զարգացման ծրագրերի քաղաքականության ինտերակտիվ մշակման համար	2011թ. դեկտեմբեր
Սահմանել և նկարագրել ՈԱԱԿ-ի գործունեության պլանավորման և վերահսկման հիմնական բաղադրիչները	2010թ. նոյեմբեր
Սահմանել և ներդնել ՈԱԱԿ-ի յուրաքանչյուր աշխատակցի աշխատանքի տարեկան գնահատման համակարգ	2010թ. նոյեմբեր
Մշակել ծրագրեր՝ ՈԱԱԿ-ի աշխատակազմի վերապատրաստման և զարգացման համար, ներկայացնել հաշվետվություն դրա վերաբերյալ	2011թ. նոյեմբեր
Կազմակերպել հանդիպումներ ՈԱԱԿ-ի աշխատակիցների հետ՝ կազմակերպչական հարցերը քննարկելու նպատակով, տարին երկու անգամ	2010, 2011, 2012թթ.

Աշխատանքի նկարագրեր	
ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ քննարկումներից հետո՝ վերջնական տեսքի բերել աշխատանքի նկարագրերը	2010թ. նոյեմբեր
Մշակել ՈԱԱԿ աշխատակազմի վարձատրության թափանցիկ համակարգ	2011թ. հուլիս
Մշակել ընթացակարգեր՝ աշխատակազմի ձևավորման և ընտրության համար՝ ներառելով (միջազգային) ՄՈՒՀ-երի հետ աշխատակիցների փոխանակման համակարգ	2011թ. նոյեմբեր
Մշակել վերապատրաստման ծրագիր՝ կրտսեր մասնագետների համար	2011թ. հուլիս
Գնահատել աշխատանքի նկարագրերը՝ երկու տարին մեկ անգամ	2012, 2014 թթ. նոյեմբեր
Որակի ներքին ապահովման համակարգ	
Ստեղծել որակի ներքին ապահովման համակարգ, որը կներառի ՈԱԱԿ-ի գործունեության բոլոր ուղղությունները և կհամապատասխանի եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջներին	2010թ. դեկտեմբեր
Մշակել և գործարկել ներքին և արտաքին հետադարձ կապի մեխանիզմներ	2010թ. դեկտեմբեր
Ստեղծել որակի ձեռնարկ՝ գործընթացների և ընթացակարգերի ստանդարտացման համար	2010թ. դեկտեմբեր
Մշակել Microsoft Sharepoint-ը՝ որպես ՈԱԱԿ-ի տեղեկատական համակարգ	2011թ. դեկտեմբեր

Կազմակերպել ՈԱԱԿ-ի արտաքին գնահատումը՝ կենտրոնի առաքելության ու եվրոպական չափորոշիչների և ուղենիշների պահանջների իրականացման տեսանկյունից	2012թ. դեկտեմբեր
Արտաքին գնահատման արդյունքների հիման վրա՝ լիիրավ անդամակցության նպատակով դիմել Որակի ապահովման եվրոպական ցանցերին	2013թ.
Որակի արտաքին ապահովման համակարգ	
Սկսել որակի արտաքին ապահովման գործընթացների առաջին շրջափուլը՝ համակցված ռազմավարությամբ (պարտադիր ինստիտուցիոնալ փորձաքննություն և ծրագրային հավատարմագրում՝ կամավորության սկզբունքով)	2011 – 2014թթ.